HEKS EPER

ԽՆՁՈՐԵՆՈՒ ԵՎ ՏԱՆՁԵՆՈՒ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԸ

eed Evangelischer Entwicklungsdienst

Խնձորենու պտղակեր



Չափազանց վտանգավոր վնասատու է, այն տարածված է ամենուրեք և խնձորենուց բացի վնասում է նաև տանձենուն և մի շարք այլ պտղատեսակների: Ձմեռում է վնասատուի վերջին հասակի թրթուրը: Գարնանը հարսնյակավորվում է, որից դուրս եկած էգերը բեղմնավորվելուց մի քանի օր անց ձվադրում են մեկական՝ տերևների, պտուղների և ընձյուղների վրա: Մեկ էգը դնում է առավելագույնը 300 ձու: Ձվից դուրս եկած թրթուրը կրծելով պտղի վրա առաջացնում է փոսիկ, խորանում նրա մեջ, փակում է մուտքի անցքը ոստայնով պատված կրծոնների կույտով ու իր արտաթորանքով և անցք է բացում մինչև սերմնախորշը, որտեղ շարունակում է սնվել սերմերով: Մեկ պտղից թրթուրը հետագայում անցնում է երկրորդ, երբեմն էլ երրորդ պտղի մեջ: Սնումը ավարտելուց հետո թրթուրը դուրս է գալիս պտղից, մտնում է կեղևի տակ, կամ նրա ճեղքերում և բոժոժ հյուսում: Այն շրջաններում, որտեղ վնասատուն մեկ սերունդ է տալիս, թրթուրները բոժոժի մեջ են մնում մինչև գարուն, իսկ երկու և ավելի սերունդ տվող շրջաններում թրթուրների մի մասը հարսնյակավորվում է, որից թռչում են թիթեռները, իսկ մյուս մասը դիապաուզում է մինչև գարուն:





Պայքարի միջոցառումները

- Բուսական մնացորդների հավաք ու ոչնչացում
- Հողի վար և բաժակափոր
- Ֆերոմոնային թակարդների կիրառման հիման վրա նշված պատրաստուկների օգտագործում. արրիվո 0,5 լ/հա (10լ ջրին 5մլ), տալստար 0,8լ/հա (10լ ջրին 8մլ), դեցիս 0,6լ/հա (10լ ջրին 6մլ), դեցիս պրոֆի 0,1 կգ/հա (10լ ջրին 1գր), դուրսբան 2,0լ/հա (10լ ջրին 20մլ), ինսեգար 0,6կգ/հա/ (10լ ջրին 6գր), կարատե զեոն 0,5լ/հա(10լ ջրին 5մլ), կալիպսո 0,3լ/հա (10լ ջրին 3մլ), սումի ալֆա 1,0լ/հա/ (10լ ջրին 10մլ):

Արևելյան պտղակեր



Վնասում է տարբեր մշակաբույսերի՝ ինչպես կորիզավոր, այնպես էլ հնդավոր: Մասնավորապես այս վտանգավոր վնասատուի թրթուրները հայտնաբերվել են ծիրանենու, դեղձենու, սալորենու, կեռասենու, բալենու, խնձորենու, տանձենու, սերկևիլենու և նշենու շվերում, ինչպես նաև դեղձենու (նեկտարենու), սերկևիլենու, խնձորենու, կեռասենու, ընկուզենու և նշենու պտուղներում: Արևելյան պտղակերի կողմից հասցրած վնասից առավել ուժեղ տուժում է դեղձենին, որի վրա առաջին վնասված շվերը ի հայտ են գալիս հենց առաջին սերնդի թրթուրների դուրս գալուց: Ձվից դուրս եկած թրթուրը շվի մեջ հիմնականում ներթափանցում է աճման կոնից: Շվի վնասված գագաթները աստիճանաբար թոշնում և չորանում են: Առաջինը վնասվում են՝ ծիրանենու, նշենու և դեղձենու շվերը, իսկ ամռան երկրորդ կեսին վնասատուն անցնում է այլ պտղատու ծառատեսակների վրա: Մեկ պտղի մեջ կարող են կերակրվել մեկից ավելի, տարբեր հասակի թրթուրներ, ինչը տարբերակում է արևելյան պտղակերին խնձորենու և սալորենու պտղակերներից: Այս տեսակի պտղաբերությունը տատանվում է 60-100 ձվի սահմաններում:



Պայքարի միջոցառումները նույնն են ինչ որ խնձորենու պտղակերի

Խնձորենու կանաչ լվիճ



Տարածված է ամենուրեք, որտեղ աճում է խնձորենին: Այս վնասատուն ձմեռում է ձվի փուլում հնդավոր մշակաբույսերի /խնձորենի, տանձենի, սերկևիլենի/ միամյա շիվերի վրա, բողբոջների հիմքում: Ձվերը սև գույնի են և լավ նկատելի: Տերևաբողբոջների բացվելու շրջանում ձվերից դուրս են գալիս սերնդահիմնադիրները, որոնք բացվող բողբոջների մեջ են անցնում, իսկ այնտեղից՝ նոր առաջացած տերևների վրա և տակի կողմից ծծում են նրանց բջջահյութը: Սկսած երկրորդ սերնդից, հանդես են գալիս թևավոր սերնդահիմնադիրները, որոնք թռչում են նույն կամ այլ ծառերի վրա և առաջացնում փոքրիկ գաղութներ, Գլխավորապես ընձյուղների և նոր կազմակերպված տերևների վրա: Վեգետացիայի ընթացքում վնասատուի սնվելու հետևանքով տերևները արագ կուչ են գալիս, իսկ ընձյուղները ծռմռվում են և կտրուկ դանդաղում է նրանց աճը: Պայքար չկազմակերպելու դեպքում վերջիններս կարող են չորանալ:

Պայքարի միջոցառումներ

Համալիր պարարտացում, չափավոր ոռոգում: Վեգետացիայի ընթացքում ծառերը փոխեփոխ սրսկել հետևյալ պատրաստուկներից որևէ մեկով. կոնֆիդոր մաքսի (0,1կգ/հա, 10 լ ջրին1գր), կալիպսո (0,3լ/հա, 10 լ ջրին 3մլ,), վարրանտ (0,3լ/հա, 10լ ջրին 3մլ,), ակտարա (0,5 կգ/հա, 10 լ ջրին 5գ):



Պտղատուների գորշ (կարմիր) տիզ



Պտղատուների գորշ տիզը սնվում և զարգանում է տերևների վերին երեսի վրա, իսկ հանգստի շրջանը վերին և ստորի երեսների վրա ու ճյուղերի համեմատաբար պաշտպանված մասերում: Վնասատուն ծակում է էպիդերմիսը և ծծում բջջահյութը: Վնասված հատվածում հյուսվածքները ստանում են գորշ գունավորում, տերևները կարող են չորանալ և թափվել: Թուլանում է բույսերի աճը, ինչպես նաև հաջորդ տարվա ծաղկաբողբոջների ձևավորումը: Վնասում է խնձորենուն, տանձենուն, սալորենուն, շլորենուն, ծիրանենուն, դեղձենուն, բալենուն և կեռասենուն



Պայքարի միջոցառումներ

Ծառերը սրսկել հետևյալ պատրաստուկներից մեկով, անհրաժեշտության դեպքում սրսկումը կրկնել նշված այլ տզասպաններից որևէ մեկով. տալստար 0.8լ/հա (10լ ջրին 8մլ), նեորոն 1.5 լ/հա (10լ ջրին 15մլ), կառատե զեոն 1.0 լ/հա (10լ ջրին 10մլ), օմայթ 1.5 լ/հա (10լ ջրին 15 մլ)

Կալիֆորնիական վահանակիր



VPRAVDA.RU

Կալիֆորնիական վահանակիրը վարակում է ծառերի բունը, բոլոր տարիքի ճյուղերը, շիվերը, տերևները, պտուղները: Ուժեղ վարակի դեպքում ծառերի ճյուղերի ու բնի կեղևը պատռվում են, աստիճանաբար չորանում և թափվում: Պտուղների վրա սնման հետևանքով առաջանում են կարմիր բծեր, որոնք միաձուլվելով առաջացնում են գոգավորություններ:

Ուժեղ վարակի դեպքում պտուղները մնում են մանր ու կորցնում ապրանքայնությունը: Եթե կալիֆոռնյան վահանակրով ուժեղ վարակված ծառերի վրա հետևողական պայքարի միջոցառումներ չձեռնարկվեն, ապա դրանք 2-3 տարվա ընթացքում կարող են չորանալ:

Պայքարի միջոցառումները

Արգելվում է կալիֆորնիական վահանակրից ազատ վայրեր ներմուծել վահանակրի կողմից վնասվող պտղատու, հատապտղատու, անտառային և դեկորատիվ բույսերի տնկիներ, կտրոններ, բուսակներ այնպիսի շրջաններից, որտեղ տարածված է կալիֆոռնյան վահանակիրը: Այն տնտեսություններից, որոնք ազատ են կալիֆորնիական վահանակրից, բայց գտնվում են վարակի տարածման գոտում, վնասվող մշակաբույսերի տնկանյութի և արմատակալած բույսերի բացթողումը թույլատրվում է տեղում վարակազերծելուց հետո՝ միայն վահանակրի տարածման գոտում գտնվող տնտեսություններին:

կալիֆորնիական վահանակրից չորացող ծառերն անհրաժեշտ է արմատախիլ անել և տեղում այրել: Վահանակրի դեմ պտղատու ծառերի բարձրաճ սորտերի՝ որակով և լիարժեք սրսկումը ապահովելու համար հարկավոր է գարնանը էտի օգնությամբ կատարել սաղարթի իջեցում:

Ամռանը վահանակրի թափառողների հանդես գալուց 6-7 օր հետո, ապա 10-12 օր անց խնձորենու, տանձենու տնկարկները սրսկել հետևյալ պատրաստուկներից որևիցե մեկով՝ ադմիրալ 0.5-0.8 լ/հա (10լ ջրին 5-8մլ), բի-58 նոր- 2լ/հա (10լ ջրին 20մլ), իմիդան 0.75կգ/հա (10լ ջրին 7.5գր), կալիպսո-0,3 լ/հա (10լ ջրին 3մլ):, կարատե զեոն-0,5 լ/հա (10լ ջրին 5մլ) պատրաստուկներից որևէ մեկով: Աշխատանքային հեղուկի ծախսը՝ 1000լ/հա:



Խնձորենու ստորակետանման վահանակիր



Վնասում է մի շարք մշակաբույսերի: Համարվում է խնձորենու և տանձենու վտանգավոր վնասատու: Սնման հետևանքով թուլանում է բույսի աճը, տերևները գորշանում են, ուժեղ վարակի դեպքում ամբողջ ծառը կամ նրա առանձին մասերը չորանում են: Ձմեռում է ձվի փուլում էգի վահանիկի տակ:

Ձմեռած ձվերից թափառողների դուրս գալը սկսվում է, երբ օդի ջերմաստիճանը բարձր է 15°C-ից: Դուրս եկած թրթուրները տարածվում են և վնասում ընդհուպ պտուղները:



Պայքարի միջոցառումները

Կիրառել կալիֆորնիական վահանակրի դեմ օգտագործվող պատրաստուկները

Խնձորենու ծաղկակեր



Խնձորենիների և տանձենիների վտանգավոր վնասատու է: Թրթուրը զարգանում և սնվում է կոկոնների ներսում, իսկ պսակաթերթերը իրար է կպցնում կրկղանքով: Վնասված կոկոնները գորշանում և չորանում են: Բզեզները գարնանը սնվում են բողբոջներով և ընձյուղներով ապա կոկոններով: Ամռանը նրանք կմախքեցնում են տերևները և ծակում պտուղները:

Պայքարի միջոցառումներ

կարատե զեոն (0,5 լ/հա, 10 լիտր ջրին 5մլ), ամպլիգո (0,3 լ/հա, 10 լիտր ջրին 3մլ), մովենտո (0,8-1,5 լ/հա, 10 լիտր ջրին 8 15մլ), սիրոկո (0,8-1.9լ/հա, 10լիտր ջրին 8-19գ):





Խնձորենու տերևալվիկ



Այս տեսակը նպաստում է քոս հիվանդության զարգացմանը: Վնասում է ինչպես բջջահյութը ծծելով, այնպես էլ մեղրացող արտազատելով: Ուժեղ վարակի դեպքում ծաղկաբողբոջները չորանում են և թափվում, իսկ տերևները մնում թերզարգացած և դեղնում են: Խնձորենիների ծաղկելուց մեկ շաբաթ առաջ նիմֆաները անցնում են ծաղկաբույլերի, կանաչ շվերի և տերևների վրա, որտեղ սնվելով մոտ մեկ ամիս մաշկափոխվում են և դառնում հասուն: Օգոստոսին հասունները բեղմնավորվում են դարձյալ խնձորենու վրա և ձվադրում միամյա ճյուղերի կեղևի ճեղքերում, պտղաշվերի ծալքերում և պտղաբողբոջների վրա մինչև սեպտեմբերի վերջը: Դրված ձվերը ձմեռում են:



Պայքարի միջոցառումներ նույնն են ինչ որ խնձորենու կանաչ լվիճ դեմ:

Խնձորենու ցեց



Հայաստանում հանդիսանում է խնձորենու վտանգավոր վնասատու: Վնասատուի թրթուրները ձմեռում են վահանիկի տակ: Գարնանը խնձորենիների ծաղկելուց մոտ մեկ շաբաթ առաջ թրթուրները դուրս են գալիս վահանիկի տակից և սնվում են երիտասարդ տերևների հյուսվածքներով և ընդհանուր ականում: Այդ տերևները գորշանում են և դառնում աչքի համար լավ նկատելի: Թրթուրները տերևում սնվում են մոտ երեք շաբաթ, ապա դուրս են գալիս, սկզբում սնվելով կմախքացնում են հետո դրանք ոստայնով պատելով և բներ կառուցելով ապրում են ներսում և ավելի մեծացնում բները: Երբ բնի շուրջ բոլոր տերևները կերված են, թրթուրները անցնում են ամբողջ ճյուղի վրա և այդտեղ նոր բներ առաջացնում: Մոտ մեկ ամիս ապրելով բներում հենց այդտեղ էլ հարսնյակավորվում են առանձին, սպիտակ բոժոժներում: Դուրս եկած էգերը բեղմնավորումից մի քանի օր անց ձվադրում են, որոնցից դուրս եկած թրթուրները անցնում են ձմեռման:





Պայքարի միջոցառումներ – վեգետացիայի ընթացքում ծառերը սրսկել շանս պլյուս(1,5լ/հա, 10լ ջրին 15մլ), պիրինեքս սուպեր (2լ/հա, 10 լ ջրին 20մլ)

Բրդապատ լվիճ

Հայաստանում բազմանում է միայն խնձորենիների վրա: Վնասատուն ձմեռում է ծառի հիմնականում արմատավզիկի շուրջը և շատ քիչ թվով բնի կեղևների ճեղքերում: Ձմեռում են ցածր հասակի թրթուրները: Գարնանը նրանք հասունանալով բազմանում են և աստիճանաբար բարձրանում ծառի բնի և ապա սաղարթի վրա, ծծում ճյուղերի հյութը: Մասսայական բազմացման տարիներին բնի և ճյուղերի վրա առաջանում են խոցեր, բույսի մեջ խանգարվում է նորմալ հյութաշարժը և ծառերը կարող են չորանալ: Ավելի փոքր ծառերի մոտ խոցեր և ուռուցքներ են առաջանում արմատավզիկի և հաճախ արմատների վրա:



Պայքարի միջոցառումներ վեգետացիայի ընթացքում ծառերը սրսկել պիրինեքս սուպեր (0,7 լ/հա, 10 լ ջրին 7մլ), իմիդան (0.75լ/հա, 10 լ ջրին 7.5 մլ)



Տանձենու սղոցող



Ձմեռում է թրթուրի փուլում հողի մեջ պատրաստած բոժոժում մինչև 15 սմ խորության վրա: Գարնանը թրթուրները սկսում են հարսնյակավորվել: Այս փուլը տևում է 15-20 օր, որից հետո սեռահասուն միջատները թռչում են: Թռիչքից ու բեղմնավորումից մի քանի օր հետո էգերը սկսում են ձվադրել արդեն բացվող տանձենու կոկոնների հիմքի մասում: Ձվադրման նպատակով սղոցված հատվածը 6-8 ժամ անց գորշանում է և սևանում, որով և աչքի է ընկնում: Ձվից դուրս գալով՝ /ծաղիկների պսակաթերթերի թափվելու շրջան/ թրթուրը սնվելով շարժվում է դեպի ծաղկի բաժակի հատակը: Այնուհետև խորանում է կազմակերպվող պտղի մեջ սերմերը ուտելով վնասում է սերմնարանը: Մեկ թրթուրը կարող է վնասել մինչև չորս պտղի: Վնասված պտուղները թափվում են գետնին և թրթուրը դուրս գալով մտնում է հողի մեջ ու 2-3 օր անց անցնում է ձմեռման՝ իր պատրաստած բոժոժում:

Պայքարի միջոցառումները

Մեխանիկական միջոցառումներից արդյունավետ է ծաղկումից առաջ ծառերը սավանի վրա թափ տալը և վնասատուների ոչնչացնելը: Քիմիական պատրաստուկներից ծաղկակոկոնների բացվելուց առաջ կամ ծաղիկների 70 տոկոսը թափվելուց հետո սրսկել Բի 58 նոր կամ դանադիմ 1.5լ/հա (10լ ջրին 15մլ):



Տանձենու քառոտ տիզ

Բավական տարածված վնասատու է, հանդիպում է տանձենու գրեթե բոլոր այգիներում: Հասցրած վնասի հետևանքով տերևների վրա հակառակ երեսին, առաջանում են սկզբում սպիտակավուն գխտորներ, որոնք վնասատուի թվաքանակի ավելացմանն զուգընթաց որոշ ժամանակ անց ստանում են գորշագույն երանգավորում: Տանձենու քառոտ տզի հասցրած վնասի պատճառով ուժեղ վարակված այգիներում նկատվում է տերևների չորանացում և տերևաթափ:

Պայքարի միջոցառումները

Վեգետացիայի ընթացքում ծառերը փոխեփոխ սրսկել հետևյալ տզասպան պատրաստուկներից որևէ մեկով. էնվիդոր 1,0 լ/հա (10լիտր ջրին 10 մլ), օմայթ 1,5 լ/հա (10լիտր ջրին 15մլ), կարատե զեոն 0,8-1,0 լ/հա (10լիտր ջրին 8 -10 մլ):





Տանձենու տերևալվիկ



Տանձենու սովորական տերևալվիկը լայնորեն տարածված վնասատու է: Հանդիսանում է տանձենու առավել վտանգավոր վնասատուներից մեկը: Հասցրած վնասի հետևանքով տերևները, շվերը, պտուղները դանդաղ են զարգանում, դեֆորմացվում են: Տերևները գունաթափվում են, ծածկվում վնասատուի արտաթորանքով, որի հետևանքով ասիմիլյացիայի պրոցեսը խախտվում է և տերևները թափվում են:





Պայքարի միջոցառումներ

Վեգետացիայի ընթացքում ծառերը փոխեփոխ սրսկել հետևյալ պատրաստուկներից որևէ մեկով՝ Կալիպսո (0.3լ/հա, 10լիտր ջրին 3մլ,), Բի 58 նոր (1.5-2լ/հա 10լ ջրին 15-20մլ), Ակտարա 0,3 կգ/հա, 10լիտր ջրին 3գ):

Տանձենու ժանյակամլուկ



Փոքրիկ 2,0-3,0 մմ երկարությամբ միջատներ են, թրթուրները շատ դանդաղաշարժ են: Այս տեսակը ունակ է շատ արագ բազմացման:

Էգը ապրում է մոտ մեկ ամիս և կարող է այդ ընթացքում դնել մինչև 600 ձու: Վնասատուն գաղութներով սնվում է տանձենու տերևների հակառակ երեսին, որի հետևանքով տերևները գունաթափվում են և ծածկվում վնասատուի գորշագույն արտաթորանքով և մասամբ թափվում:

Պայքարի միջոցառումներ

Վեգետացիայի ընթացքում ծառերը փոխեփոխ սրսկել հետևյալ պատրաստուկներից որևէ մեկով կոնֆիդոր մաքսի(0,1 կգ/հա, 10 լ ջրին 1 գ), կալիպսո (0.3լ/հա, 10լիտր ջրին 3մլ,), Բի 58 նոր (1.5-2լ/հա 10լ ջրին 15-20մլ.)





Պատրաստել է